

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 25/6

ք.Երևան

8 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ԱԱՀ-ի հաշվարկը չեղարկելու վերաբերյալ «ԷՐԵԲՈՒՆԻ» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԷՐԵԲՈՒՆԻ» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից 31.01.2018թ. թյուրիմացաբար և հապճեպորեն տրվել է հայտարարություն ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ: Ելնելով ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխություններից (հոդված 255) ընկերությունը չի հանդիսանում որպես ԱԱՀ վճարող:

Ընկերությունը խնդրում է մեղմորեն վերաբերվել և տրված հայտարարությունը չեղյալ համարել:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ԷՐԵԲՈՒՆԻ» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ-ը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 13.05.2003թ.:

31.01.2018թ. ընկերության կողմից ներկայացվել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և 2018թ. ընթացքում օրենքի ուժով համարվում է ԱԱՀ վճարող:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են համարվում նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

Քննարկվող դեպքում «ԷՐԵԲՈՒՆԻ» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ կողմից 31.01.2018թ. ներկայացվել է ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը օրենքի ուժով համարվում է ԱԱՀ վճարող:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԷՐԵԲՈՒՆԻ» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ-ի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ